ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183 yeghegnadzor@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
20 հոկտեմբերի 2023 թվականի N 623-Ա

«ՄԵԾ ՀԻՄՔ-1» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Գնումների մասնին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի, 2-րդ մասի պահանջներով, հաշվի առնելով 2021 թվականի հուլիսի 13-ին կնքված N ՎՁՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/04 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի և 2021 թվականի հուլիսի 15-ին կնքված N 1 համաձայնագրի ժամկետների խախտումը, ինչը հանգեցրել է նույն պայմանագրի շրջանակներում պետության կողմից տրամադրվող սուբվենցիոն գումարի ետ վերադարձին և պայմանագրով սահմանված շինարարական աշխատանքների չկատարմանը, հիմք ընդունելով N ՎՁՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/04 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի 8.11-րդ կետի պահանջով սահմանված կարգով Եղեգնաձորի համայնքապետարանի կողմից պայմանագրի միակողմանի լուծման հանգամանքը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Մեծ Հիմք-1» ՍՊ ընկերությանը (ՀՎՀՀ 01284774) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրել լիազոր մարմնին և «Մեծ Հիմք-1» ՍՊ ընկերությանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2023թ. հոկտեմբերի 20
ք.Եղեգնաձոր